


ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԴՐԱՍՏԱՆԻ
ԿԱՆՈՆԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուկարիոյ Համար
Տարեկան ֆրք 10
Վեցամսեայ " 5
ԿԱՆԻՒԻԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրք 12
Վեցամսեայ " 6
ԿԱՆԻՒԻԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Կը հրա... լուի Շաբաթ օրերը: Մա-
նուցմը... րը 10 Սանդիս: Երկու թիւ ա-
ռաջ հի... արակուած թերթը 40 Սանդիս:
Չհրա... րած գրութիւնը եւ յսրոյր:

Հասցէ
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ՀԱՅԵԼԻ

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Անցեալները գրած էինք որ Մեծ. Միքայէլ էֆ. Յակոբեանի ծախքով Գ. հարկ մը պիտի բարձրանայ Աղղ. հիւանդանոցին մէջ. այժմ կը տեղեկանանք թէ երկու շաբաթէ ի վեր շինուած թիւնը սկսուեր է: Այս հարկը հիւանդանոցի հիւրանոցը պիտի ըլլայ, որուն մէջ պիտի գտնուին նաեւ տնօրէնի և այլ պաշտօնէից սենեակները ու դեղարանը: Հիւրանոցին շինութիւնը ընթացած է, Մատուռին վերաշինութեանը պիտի ձեռնարկուի: Թէ հիւրանոցին և թէ Մատուռին շինութեան ծախքը 4000 օսմ. ոսկիէն աւելի կը հաշուուի, որուն մէկ մասը՝ քանի մը տարի առաջ ի նպատակ նոյն հաստատութեան հաւաքուած գումարին մնացորդէն և մեծ մասն ալ Յակոբեան Միքայէլ էֆէնտի կողմէ պիտի հոգացուի: Միքայէլ էֆ. ասոր փոխարէն փափագ յայտներ է որ, իր դերեզմանը հիւան-

դանոցի պարտէզին մէջ ըլլայ եւ հոն թաղուի:

Հանգէս Ամսօրեայի Օգոս. Սեպտի թիւերուն մէջ կը կարդանք հետեւեալը.

«Խնդրենք՝ մեր բաժանորդներէն անոնք որոնք ընդունած են մեր փոքրիկ ազգարարութիւնը, հաճին կամ վեցամսեան հատուցանել եւ կամ թերթերն յետոս ուղարկել: Առաջիկայ թուէն դադրեցուցած ենք իրենց թերթը, բայց պարտքը կը մնայ պարտք և հատուցման համար ունինք մեծ զէնք մը — իրենց արժանապատուութիւնը, վասն զի պիտի ստիպուինք հրապարակաւ ծանուցանել — ՁՐԻ ԹԵՐԹԻ կարգացողներու ԱՆՈՒՆԸ: Սպառնալիք չէ այս, այլ մեր իրաւունքը:»

ԽՄԲ. ՀԱՆԴԻՍԻ

ՀԱՅԵԼԻ — Բոլորովին համամիտ ըլլալով այս տողերուն, մենք ալ մեր մասին կը յայտարարենք թէ. լրանալու վրայեղող ներկայ վեցամսեային բաժնեգիրն չի վճարողներուն անունները Սեպտեմբերին պիտի հրատարակենք:

ԸՆԹԱՅԱՒԱՐՏԻ ՄԸ

ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Փ. Պոլիս, 21 Յուլիս.

... Խմբագիր «Հայելի» հանդէսի.

Մեր վարժարաններուն 10—11 տարիներէ ի վեր ունեցած կանոնաւորութիւնը ու կարգապահութիւնը շատ վերջովեալ չըջան մը բոլորեց այս տարի: Ասոր պատճառները ամենուն յայտնի ըլլալով, չեմ ուզեր նորէն կրկնել, մանաւանդ հանդէսներու մէջ պատահած խռովութիւններն, որոնք ազգային ամէն տօնական համախմբումներու նուիրական հանգամանքը կորսնցուցին, շատ տխուր տպաւորութիւն մը թողուց ժողովուրդին վրայ: Որոշուեցաւ ուրեմն այս տարի աշակերտաց վկայականներու բաշխումը կատարել միայն ուսուցիչներու ներկայութեանը, ինչ որ տեղի ունեցաւ Յունիս 24 չորեքշաբթի օրը, առաւօտեան ժամը 10ին արական վարժարանին մէջ:

Դպրոցին զանգակը հնչեց, աշակերտներն ամենքն ալ դպրոցին սրահը գումարուեցան. անոնցմէ մէկն ալ ես էի: Շատ սրտաշարժ պատկեր մը կը ներկայացնէր դպրոցական քյարկը, տըխուր հանդարտութիւն մը կը տիրէր հոն, աշակերտներուն դէմքին վրայ զրուած զգացումներու արտայայտիչ բան մը կը տեսնուէր. ո՛ր էր այն խանդն ու եռանդը, որով կարտայայտէին աշակերտք իրենց զգացածը, ասանկ հանդիսաւոր օրերու մէջ: Ո՛ր էր այն ուրախութիւնը, որով աշակերտներն իրենց ուսման չքնաղ և անուշաբոյր փունջերը կ'ընծայէին իրենց ծնողքին, ո՛ր էր այն մխիթարական ողջագուրումը, որով ընթացաւարա աշակերտները իրենց հրաժեշտը կուտային ուսուցիչներուն և ընկերներուն: Այդ գոյտը երեւոյթներուն հակապատկէրն էր որ հիմա կը պար-

զուէր մեր ամենուս առջև, և ո՛վ էր պատճառը...: Թող իմ լռութիւնսամբ թող ըացատրութիւնն ըլլայ այս մէկ տարուան մէջ մեր վարժարանին շուրջը անցած դարձածին, որ ինծի հետ բոլոր աշակերտակիցներուս ալ դպրոցական անուշ օրերը դառնացնելէ ետքը, իրենց ամենէն փայլուն և հանդիսաւոր օրն ալ սուգով համակեց:

Երբ ամենուս ալ վկայագիրները բաշխուեցան, մեր բաղմերախոտ տեսուչը գոհունակութիւն յայտնեց աշակերտաց գովելի ընթացքին և աշխատասիրութեանը համար, ու մատնանիչ ըրաւ ընթացաւարտներուն այն ճամբան ուր պիտի յառաջանան ասկէ ետքը. յորդորեց զիրենք այն կրթական յարկը միշտ յիշել և անոր բարօրութեանը աշխատիլ:

Յարգելի տեսուչը իր խօսքերը աւարտելէ ետքը, մեր անկեղծ յարգանքները յայտնելով սիրելի ուսուցիչներուս, մեկնեցանք այդ սրճաղան յարկէն:

Կը խնդրեմ... Խմբագիր, հաճեցէք ներկայս, որ սրտիս անկեղծ արտայայտութիւնն է, հրատարակել ձեր հանդէսին միջոցաւ:

Ընթացաւարտ աշակերտ Փ. Պոլսոյ

Ազգ. վարժարանին

Ստեփան Կ Շահպատկեան

ՄՊԱՆԻԱԿԱՆ ԱՌԱՋՆԵՐ

ձրագի լոյսով ոչ կին ընտրէ, ոչ ալ կտաւ:

Կնկան ու օգի վստահութիւն չըլլար:

Ոչ մէկ եղանակ այնչափ կարճ է, որչափ կնոջ սէրը:

Կին մը կրնայ սիրոյ հաւատարիմ մնալ, բայց ոչ իրողներուն:

Գեղադէմ կին մը կամ սահմանագլուխի վրայ բերդ մը ունեցողը երբեք առանց վախի չի մնար:

ԿՍՍԻԹ

Հետեւեալին հրատարակութիւնը
խնդրուած է մեզմէ.

ԲԱՅ ՆԱԽԱԿ

Ռուսահոգի բարեկամներուս

«Քանի մը ամիսներէ ի վեր հոս կը
դանուի եկեղ իւրի մը, որ տեղէդ ե-
կած է: Հոս արդէն մեր մէջ բաւական
թուով խառնակիչներ կային, ինչ տեղը
կար որ հատ մ'ալ գուր աւելցուցիք:
Աս մարդուն մեզի պատճառած գլխու
ցաւը դարմանող հեփիմ մը չենք կըր-
նար կոր գտնել. ուստի կը խնդրենք,
Աստուծոյ սիրուն ըլլայ, եղբայր, սա
եկեղ իւրիւն կամ չկանչեցէք և կամ
խրատեցէք որ ամեն բանի մէջ քիթը
չի խօթէ. ալ օտանսիւղ եղանք»:

Ի Դիմաց ընկերութեան

Հացագործ Փալուստ

Բոժոժիկ. — Անուանեալն սոսկալի:

ԵՐԿՈՒ ԴՐԱՅՈՒՀԻՔ

— Քա ճանրմ իպրաքսէ հանրմ,
մէկ երկու շաբաթ է քի քիւմէ քիւմէ
տէլիխանլընը սա գիմացի տունը կը
մտնան կեղւան կոր «զնոսա զնոսին, բայց
որովհետեւ քանի մանչի» ըսելով ա-
տոնք ո՛վ են.

— Ես ալ քեզի պէս տեսայ, ու մէ-
ռաք ըրի հարցուցի նէ՝ վարժապետներ
են, ըսին:

— Քա հոս ատ խտար վարժապետ
կա՞ր քի.

— Ձի կար ամա, դուրսի քաղաք-
ներէն ալ եկել են. սանկ Մուսալլան
ճատտէն մէյ մը անցնիմ ըսես նէ՝ ա-
տըմ գլուխ մէկ հատին կը զարնուիս:

— Ձըսե՞ս, սալաթալլըն ալ շատ:

— Հա, ես, խօսքը մէջներինս, ըս-
բօւթան լեցնելիք բան:

— Էյ թարիֆիդ նայելով, օր մը
չէ նէ օր մը ատ ալ պիտի ըլլայ:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ.)

Վառնա

Վերջապէս, մեծ հրամանատարն
Վարդօ հոս հասաւ և Ա. այցելութիւնը
տուաւ ամիրալ Շարժումին:

Տեսակցութիւնք շատ սիրալիր ե-
ղան. Ամիրալն ու Հրամանատարը երի-
ցըս զիրար ողջագուրեցին:

Քէօճէ պուճախ ակմբոյ մէջ կըսուի
թէ այս այցելութիւնը արտաքին քա-
ղաքականութեան վրայ իր ազդեցութիւ-
նը պիտի ունենայ:

Դաշնակցականք «աչքի լոյս» ի այ-
ցելութիւններ կուտան իրարու:

Ամիրալին ապարտնքը (իմա՝ տը-
պարանք) այս միջոցին ու խտատեղի մը
դարձած է. ուր խումբ խումբ դաշնակ-
ցականք կը գիմեն բարի գալուստ
մաղթելու. համար, բայց մտնելին ու
եկնելին մէկ կըլլայ, որովհետեւ նըս-
տելու տեղ մը չկայ:

Կըսուի թէ, Մարտեանք՝ Դաշնակ-
ցականաց դէմ խըզ մը ընելու համար
մտադիր են իրենց կարող անձնաու-
թութիւններէն մէկը հոս հրաւիրել և
զայն Կէպէճէի կայարանէն դիմաւորե-
լով առաջնորդել ի հօթէլ Սըլանտիթ:

Այս համակրանքի ցոյցերէն նա-
զարեկեանց բերնին ջուրերը կը վաղէ
կոր. իսկ Միութեանականք Խրզան գը-
լուխին քաշած, Մարգար աղբօրը
խահվէէն գուրս ելած չունին:

Յուլիս 31

Այս առաւօտ մեծ հրամանատարը՝
Ամիրալին տառական նաւատորմիզը աչ-
քէ անցուց և ամեն բան իր տեղը գըտ-
նելուն համար գոհունակութիւն յայտ-
նեց. ասոր վրայ Պօրսաին մէջ դիները
բարձրաճան:

ԾԱՆՈԹ ԴԵՄՔԵՐ

Ը.

Գ.—Մ.

Միջահասակ, թուխ, տկար կազմուածքով մազերն ալ աչքերուն պէս սև, գլուխը ճաշատ, բոլորովին անխնամ մօրուք մը, որ բնաւ մկրատ տեսած չէ, հինը կը թափի՝ նորը կը բուսնի. 40 էն 42 տարեկան մարդ մը, երեսը նայիս՝ խնդալդ կուգայ: Չմեղ վերարկուի պէս երկար ու հաստը կրկնոց մը կը հագնի, աս կրկնոցը որ 30 տարի առաջ Վիէննայի նորաձեւութեանց գործարանի մը մէջ պատրաստուած է, աչափ տարի գործածուելով՝ տակաւին չէ հինցած, տարեկից է իր ճմլթկած ու քոյնը նետած մորթէ գըլխարկին:

Ամառը կարճը բաճկոն մը կը հագնի, ու այնչափ վար կը քաշէ որ բաճկոնակին օձիքը թիգ մը բարձրէն կը նշմարուի ծոծրակին վրայ: Գլխարկը՝ որ ժամանակին աշխոյժալիք է եղեր, հազար ու մէկ ձեւերու մէջ մտնելով, հիմա աշխոյժալիքն է. այս գլխարկը կը նմանի գինով ու անհոգ խաւարի գործաւորի մը գըլխարկին, որուն ժապաւենին կապը միշտ ճակտին կողմն է:

Քաղուածքը անկարելի է նկարագրել, օրուան ու ժամուան մէջ տեսանքները ունի, ձեռքերը ու թեւերը շարժելով, գէմքով ալ զանազան շարժումներ կընէ, անանկ կը կարծես որ գետնէն դանձ մը գտնելու կաշխատի, ու կը հաշուէ թէ քանի՞ մեթրօ խորը իջնել պէտք է:

Ժամերով կը խօսի, առանց ձանձրանալու, բառերը ծամելով ծամծմելով, իրեն պէս դուն ալ չես գիտեր թէ ինչ նիւթի վրայ կը խօսի. ուր որ բազմութիւն մը կամ 10—20 մարդ տեսնէ՝ առանց հրաւերի բարձր տեղ մը կընէ ու գլխարկը գլուխը ևս մեղաւորսդի ձեւով կոկորդը կը պատուէ.

«մարդը, կրօնքը, բանը փոխելու է» կը գոչէ. հիւանդ եմ, քիչ պիտի խօսիմ կրսէ, բայց ժամերով բեմէն վար չիջնար. քունդ կուգայ, կը քնանաս, կարթննաս որ հոն է. սրճարան մը գնա սուրճ մը խմէ ու նորէն եկուր, դարձեալ հոն է, ձանձրանալ չի գիտեր, ունկնդիրին ձանձրանալն ալ բանի տեղ չի գներ, ու այնչափ կը շարունակէ որ վերջապէս ճարահաստեալ, ինքն ալ իր ըսածին մէջէն չկրնարով ելնել խօսքը կը կտրէ ու վար կիջնէ: Գրածներն ալ անկապ պարբերութիւններով լեցուն են. գլխէն վեր խնդրնեւրու վրայ կը գրէ ու կը ճառէ, անանկ գաղափարի մը փարած է որ հիմակու հիմա չի կրնար համապատասխանել մեր արդի դրութեան. նոր Գարլ Մարքս մը, Ժօրէս մըն է. ծայրայեղ ընկերվարական:

Իր վարպետը Գարլ Մարքս թէեւ կը պատուիրէ որ մարդիկ ծուլանան ամեն ատեն, ամեն բանի մէջ, «բացի ուտելու, բացի վայելելու և բացի քնանալու ատեն» բայց Գ. Մ. վարպետին խօսքին կարեւորութիւն սուղ մարդ չէ, ծոյլ չէ. անխնայ աշխատող մը եղած է. ինչպէս կըսեն, «քարէն փարա հանող» հաստատակամ է, ուղղամիտ ու մարդու իրաւունք կաշկանդելու կամ խաբէութեամբ դրամ շորթելու ստորնութիւնը չընդունիր: Երբ վարնա եկաւ, ամեն օր բան մը սորվելու, մարդկութեան օգտակար ըլլալու փափագ մը ունէր. գործի ատենն իսկ միջոց մը կը գտնէր անկէ ասկէ Գաղիերէն դաս առնելու. ուր որ հանդիպէր Գաղիերէն գիտցողի մը, օձիքէն կը բռնէր, անոր բան մը կը հարցնէր կամ թարգմանել կուտար, ալ շատերը ձանձրացած էին, ու երբ կը տեսնէին թէ վարէն բրդեր կուգայ կոր, իսկոյն անդի փողոցէն կծիկը կը գնէին:

Գրպանը գիրք մը ու բառարան մը ունէր, զորս բալած ատենն ալ կը կարդար, ու շատ անգամ տեղ մը նստած՝ բարձր ձայնով վարժութիւն կընէր. լիւրժին հազար ու մէկ տեսակ թերութիւններ տալով, հնչու-

ները կը փափկացնէր . շատ անգամ ալ ան աստիճան մտադրաղ անէացած կը մնար , որ չէր տեսներ բովէն կամ առջեւէն անցնողը :

Ինչ որ է , ըրաւ չըրաւ գրագէտ մը եղաւ . շիտակ գրեց , ծուռ գրեց , խռզեց , սուղեց , թերթ մը հիմնեց . մէկ բանի թիւերը վարնա հրատարակեց , մէկ բանին հին ալ Ռուսճուգ , բայց պիտի ըսես թէ ժողովուրդը ի՞նչ հասկցաւ այդ թերթէն , աստիկայ կարեւորութիւն չունի . ան միտքը դրած էր թերթ մը հիմնել , հիմնեց , թերթը պիտի շարունակուի՞ . մեզի պէս ինքն ալ չը գիտեր , բայց ամեն պարագայի մէջ , ուշ կամ կանուխ , կամ տարին մէկ օրինակ անպատճառ պիտի հրատարակէ : Իր բաժանորդները , որոնք տարեկանը կանխիկ վճարած են , բնաւ հոգ չընեն , տասը տարուան մէջ գոնէ մէկ տարուան հաւաքածոն ստանալու վստահ ըլլալով թող սպասեն . վասն զի մեր ընկերվարականը , ինչպէս որ ըսինք , խօսքէն ետ դարձող մարդ չէ :

Պ . Գ . Մ . կը ներկայացնէ դէմքը այն մարդուն , որ իր հարուստ հօրեղբօր ժառանգութիւնը վայելելու համար անոր բարերար մահուանը կը սպասէ , բայց օր մը կիմանայ թէ հօրեղբայրը մեռեր ու ամբողջ հարստութիւնը կտակեր է ուրիշի մը . ա՛լ կըրնաք երեւակայել այդ շուարած մարդուն կերպարանքը , որ լսածը երազ կարծելով ափի բերան կը մնայ :

X

ՅԱԻԵԼՈՒԱՄ

ՄԱՂԱՂԿՈՒ ՄԵՏՈՒԿԻՆ

Տեսարանն է 'ի ֆիլիպէ . Բ . կարգի պանդոկի մը վերնայարկը , բաւական կոկիկ կահաւորուած սենեակի մը մէջ :

Տիկին Մաղթուհի Պուրկաղէն նոր ֆիլիպէ հասած է , և բառականայ քայքայօրին ընկերակցութեամբը առաջնորդուած է նոյն

օթէլը : Ճամբուն երկայնութիւնը ու շոգեկառքին ցնցումները տիկնոջ հանգստութիւնը խանգարած ըլլալով , այն օրը իր սենեակը կ'առանձնանայ և անքուն գիշեր մը կանցնէ :

Խեղճ Նինի—Մուլէն , որչափ տառապեցաւ այդ գիշերը , մինչև լուս սլքտաց տիկնոջ սենեակին դրանը առջև , ականջ դնելով որ արդեօք արթնուն է ու զինքը պիտի կանչէ՞ . բայց , յուսախաբութիւն . սենեակը մութ և լուռ էր միշտ :

Հետեւեալ առաւօտ Պ . Նինի—Մուլէն երբ իր ընկերներովը տիկնոջ սենեակը մտաւ բարի գալուստ մաղթելու , տիկինը շա՛տ փոխուած գտաւ . աչուները փոքր իջած էին , դէմքը բարկացոտ էր ու գոյնը նեւած .

— Ո՛հ , Մաղթուհի , ըսաւ հառաչելով , արդեօք հիւանդ էք , բժիշկի կամ դեղի պէտք ունի՞ք :

— Ո՛չ , պատասխանեց տիկիկը , հիւանդ չեմ , ընդհակառակը , ամեն օրուրնէ աւելի քաջառողջ եմ . բանի մը պէտք չունիմ . միայն ձեզի հետ տեսնուիլ կուզեմ , և աղէկ որ բարեկամներդ ալ հետ են : Հիմա մտիկ ըրէ ինձ , բարեկամս . պէտք է գիտնաք որ այսօրուրնէ խղած եմ իմ յարաբերութիւններս ձեզի հետ , չեմ ուզեր ալ եւս ծանչնալ զձեզ , թէ այսօր իսկ կուզեմ մեկնիլ Պոլիս , մօրս բովը երթալու :

Այս յայտարարութենէն յանկարծակիի եկաւ խեղճ Նինի—Մուլէն . չէ , ալ նոյն Մաղթուհին չէր , փոխուած էր , չէր ուզեր զինքը ծանչնալ . միթէ հաւատալի՞ բան էր . Պոլիս , ուր այնչափ սիրած էին զիրար , Ռուսճուքի մէջ երջանիկ օրեր անցուցած էին , եւ կնոջ մեղսակցութեամբը խաբած էին ամուսինը , այսօր մէկէն 'ի մէկ ամեն բան կը լըմնար :

— Բայց տիկին , խնդրեմ , ըսէ՛ք , ըսաւ , ի՞նչ է պատճառը որ կ'ուզէք յարաբերութիւննիդ խզել :

Ա. այս տիկինը գոռ ու խռպոտ ձայնով մը պատասխանեց . — Կը կարծես որ չեմ լսած , չեմ գիտեր թէ տարիներէ 'ի վեր

աղջկան մը ոտքը կապած եւ դեզ պիտի առնեմ ըսելով. խաբար՛ . . . :

— Ո՛հ, հրեշտակդ իմ. բայց սուտ եմ ատոնք ամենքը, սուտ, թշնամիի խօսքեր են. կերգնում յանուն իմ . . . չունեցած պատուոյս, որ ամբողջ կեանքիս մէջ, քեզմէ զատ մէկը ոչ սիրած եմ և ոչ ալ պաշտած. ա՛հ, մոռցա՞ք, չէ՞ք յիշեր Մաղթուհիս, թէ Պողիս ո՛րչափ կը սիրէինք զիրար. կարելի՞ բան է որ այսօր ալ ես ձեզմէ զատ մէկ ուրիշը սիրեմ :

— Ինչո՞ւ հին բաներու վրայ կը խօսիս. կը զղջամ այսօր ըրածներուս վրայ. կը ցաւիմ ամուսինս խաբած ըլլալուս համար. ա՛լ այդ բաները մոռցիր, եւ մի՛ ուրանար ըրածներդ. հերիք է որչափ խաբեցիր զիս. ալ չեմ խաբուիր. քեզի հետ գործ չունիմ. և խորհուրդ կուտամ որ ամուսնանաս այն հէք աղջկան հետ :

Պ. Նինի—Մուլէն, այն միջոցին դերասանի մը պէս կատարեալ ձևերով տիկնոջ ոտքերուն առջին ծունգի եկաւ և համբուրելով գանոնք, գոչեց հեծեծաբին .

— Պաշտելի՛ Մաղթուհիս, չէ՛, մի՛ հաւատար ոչ ես այդ աղջկը սիրած ըլլամ. զիս թշուառ մի՛ ըներ քու պաշտելի սէրէդ զրկելով. ահա բարեկամացս ներկայութեանը կը յայտարարեմ թէ ես այն աղջկը երբէք սիրած չեմ. միայն ժամանակ անցնելու համար էր որ կրնէի. ես ի՛նչ յանցանք ունիմ. ան իմ ճամբուս վրայ ելաւ. ան էր որ ինձի սիրտ տուաւ ու սիրեց զիս. ես միշտ կը խնդայի անոր վրայ, միշտ քեզ կը յիշէի, կարելի՞ բան էր որ քեզ ձգելով անանկ աղջկան մը սիրտ տայի :

— Լրբութիւնդ չափ չունի՛, Նինի—Մուլէն, գոչեց տիկինը, հիմա աւելի մեղաւոր ես որ կը խոստովանիս աղջիկ մը խաբէլդ, մոռցի՛ր զիս. հերիք է որչափ զիս խաբեցիր. ամուսնացի՛ր անոր հետ :

Ձայս ըսելէ ետքը ոտքի ելաւ և ուղղակի կայարան գնաց, առանց ահանջ կախելու Նինի—Մուլէնի սուտ արցունքներուն և բայ-

լոյսայական միմոսութիւններուն :

Տիկին Մաղթուհի հիմա Պողիս իր մօրը տունն է, և հոն իր յանցանքները քաւել կաշխատի. ամուսինն ալ, աւա՛ղ, յուսահատ և անմխիթար է :

Իսկ Նինի—Մուլէնի համար կըսեն թէ իր սիրուհւոյն հետ կաշխատի լուսանալ, ու չկատելով որ տիկին Մաղթուհի ալեւս իրմէ երես դարցուցած է, իր սուտ խոստովանութեան բնարը կը զարնէ օրիորդին :

ԶԱՆԶԱՆ

Հայելի. —Ուրիշ անգամ նորէն պիտի փերադառնանք այս խնդրին. բնաւ չպիտի կորսնցնենք Պ. Նինի—Մուլէնի հետքը. միշտ պիտի հետապնդենք. ինչ որ տեսնենք ու լրսենք, պիտի հրապարակենք ու ձաղկենք, որպէս զի ուրիշներ ալ քաջալերուելով, այս տեսակ ստոր արարքներով մեր ընկերութեան պատիւը չարատաւորեն : Մենք մեր մատը կը դնենք այն վերջին վրայ՝ որ կայ և իրողութիւն է. բնաւ չենք գոցեր, այլ կաշխատինք աւելի բանալու որ բուժումը կատարեալ ըլլայ : Խաբել աղջիկ մը, քեզի հետ պիտի ամուսնանամ ըսելով ժամանակ անցունել, պարկեշտ և առաքինի մօր մը կոչումը ունեցող կին մը հրապարակ ու անոր ամուսինը դժբաղդ ընել. չէ՛, ասոնք ներելի չեն. ու յետոյ յարձակիլ թերթի մը վրայ, անոր վարկը կոտրել աշխատիլ որ միշտ բարձր ֆնացած է. չէ՛, պարոն Նինի—Մուլէն չէ՛, մեր թերթը իր կոչմանը համեմատ միշտ պիտի ձաղկէ, մերկապարտնոց ընէ մոլութիւնը, զոր ձեզի պէս անխեղճներ կը գործեն. երբէք չպիտի շեղինք այս ուղղութենէն, ո՛վ որ ալ ըլլայ, առանց շահու ահնկալութեան կուտանք հարուածը, խաբել համար չենք լռուեր. վկայ են մինչև ցարդ մեր հրատարակած թերթերը : Գիտցէք որ հայ լրագրութիւնը գիտէ իր կոչումը, կը ճանչնայ իր դերը ու երբէք չուզեր մեղանչել անոր դէմ :



ԿԵՂԾ ՄԱՐԴԱՊԱՆ ՄԸ

Հատ բաներու կեղծը լսուած էր, բայց մարդասպանին կեղծը ոչ լսուած եւ ոչ ալ տեսնուած էր մինչեւ ցարդ:

Փարիզեան լրագրաց մէջ հետեւեալը կը կարդանք:

«Ֆրանսայի Ֆոմբիէն գաւառին մէջ վերջերս Ռամբինո անուամբ թափառական մը կը ձերբակալուի եւ ոստիկանութեան կողմէ եղած հարցաքննութեան մէջ կը խոստովանի թէ, ինքն մեղսակից է Բէրիէ անուն մարդասպանին, որ մեծաւ փութաջանութեամբ կը փնտռուի ամեն կողմ: Այս խոստովանութեան վրայ անմիջապէս Բարիզ կը ղերկուի, ուր ընդհ. դատախազի կողմէ եղած հարցաքննութեանց եւ խուզարկութեանց վրայ կը հաստատուի թէ՛ յիշեալը պարզ դատարկաշրջիկ մ'է: Անոր վրայ Ռամբինո ոստիկանութեան պաշտօնեաները խաբած ըլլալու յանցանքը կը դատապարտուի մէկ շաբաթ բանտարկելութեան եւ ապա կ'արձակուի:

Երբ իրեն կը հարցնեն թէ ինչ նպատակաւ այսպէս վարուած էր, կը պատասխանէ:

— Ինչ ընեմ եղբայր. Բարիզ քաղաքը տեսնել կ'ուզէի, եւ որովհետեւ գրպանս կուտ մը չը կար, այս միջոցաւ միայն կրնայի անկուտիաբար Բարիզն այցելել:



Տիկին Արտէմ, որ ծանօթ շատախօս մ'էր, անցած օր իր բժիշկին տունը գնաց:

— Տօբթօր, ըսաւ անոր. իրաւ որ հիշ

գլուխդ թամ ինծի չես նայիր կոր. քեզի հիւանդ եմ կրսեմ նէ՛ հանգստութեան պէտք ունիս կըսես, լեզուս պիլէ նայած չես:

— Նայելու պէտք չունիմ, տիկին, պատասխանեց տօբթօրը, վասն զի գիտեմ որ անիկա ալ հանգստութեան պէտք ունի:

Գեղանի կին մը անցեալ օր իրենց այցելութիւն տուող հարուստ բարեկամի մը կըսէ.

— Քեզի բան մը պիտի ըսեմ Յակոբ աղա, ամա չպիտի բարկանաս.

— Չեմ բարկանար:

— Այսչափ հարստութիւն ունենալէդ ետքը ինչո՞ւ համար տահա վաստկիմ կըսես:

— Ա՛հ, տիկին, դուք ալ այդչափ աղւոր ըլլալէ ետքը, սա ինչո՞ւ համար նորէն կարմիր կը քսէք:

Խմանին մէկը, օր մը խելքին փշելով, եկեղեցի գնաց եւ քահանային խոստովանեցաւ իր գինեմոլութիւնը: Քահանան բաւական իրատեց զինքը այդ գէշ մոլութենէն ետ կենալու համար ու վերջապէս արձակումը տուաւ:

Գինովը ըստ սովորութեան քահանային ձեռքը պագաւ, ու իւր նուէր՝ 10 փարանոց մը դրաւ անոր մէջը:

— Օրհնա՛ծ, ըսաւ տէր պապան. աս տառնոցը պահէ տէ՛ր քե՛ք մըն ալ ինձմէ խմէ:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ

Ռուսճուգ

Գիշերուան բայլաչօն՝ ցորեկը սախայութիւն կընէ կոր, Լօմէն ջուր բերելով, իր աղտոտները իրենց մէջ լուալու համար:



ԿԱԼՎԱՆԻՍԻ



Ամեն տեսակ
տպագրական կա-
ղապարներ պատրաստող, նաեւ
անձնական և թէ՛ առևտրական կնիքներ:
Սոյն կնիքները որ ըստ վերջին զրուծեան
պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երե-
ցած քառաչուէ կնիքներէ աւելի զիմացկուն են
և զիւրուծեամբ կը տպագրուին. գինն ալ
քառաչուի գինէն տարբերութիւն չունի: Քա-
ղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով
կը կատարուին: Դիմել ի վառնա Չիլինկիր-
էր փողոց թիւ 561: Գին գոհացուցիչ:

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԵՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք:
Այցետոմս, հասցետոմս, նոմակա-
շիւն, հրաւիրատոմս, բարենիշ. տոմ-
սակ եայլն եայլն թէ՛ պարզ և թէ՛
ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը տը-
պագրուին: Քաղաքներէ եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին.
Գին գոհացուցիչ: Դիմել Հայելիի խըմ-
բագրութեան:

ԱԶԴ



ՐԳԱՐԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ

Բովանդակութիւն թատերա-
կան երգերու և պարերու.
նաեւ վիճակ ընկերական:
Գին մէկ ֆրանք:

Վայրկենական Տպագրութիւն

ԱՅՅԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր. ի կը տպագրուի և ա-
նոր տուփին մէջ կը գտնուի Այցետոմսի գոր-
ծածութեան հրահանգը պարունակող տետրակի
մը, որուն կողքին վրայ այցետոմսին տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբա-
գրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանգիմը
յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն
Պուլկարական 5, 10 եւ 15 սանգիմնոց նա-
մակադրօջմ կ'ընդունուի: Կտնիսիկ:

«Հայելի»ի Ա. տարւոյ թիւերը
կազմեալ կը վաճառին գին տասը ֆր.
թղթատարի ծախքը մեր վրայ:



ԳՈՒՇԸԿ
Ա. Պ. Ա. Գ. Ա. Յ. Ի

Կամ Զուարճալի Բաղդադացի
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզ-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մեկ ֆրանքի, թղթատարի ծախքով
դիմել խմբագրութեան:



ՃԱՇԱՐԱՆ ԵՎ ԶԲՕՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԻԻՖԷՆ ՃԵԼՆ և ԸՆԿ.

Հաճի Բանաբօին ճիշդ գէմը

Հարսանեաց և խնձօքներու սպասներ
ալ կը գտնուին, որոնք զիւրտմատչելի գի-
ներով վտրձու կը տրուին:

Отговоренъ редакторъ: Н. Драгулев
Печатница "Взаимность" — Варна.